

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ

Բովանդակություն

- Ա. Ընդհանուր Կանոններ
- Բ. Ազգային Երեսփոխանական Ժողով
- Գ. Առաջնորդ
- Դ. Ազգային Վարչութեան Կրօնական եւ Վարչական Ժողովներ
- Ե. Ծիսական Համայնքներ
- Զ. Անդամական Ժողով
- Է. Հոգաբարձություն
- Ը. Հաշուեփնիչ Յանձնախումբ
- Թ. Հոգեւորական պաշտօնեաներ
- Ժ. Կարգապահություն
- ԺԱ. Օրինական Ընդհանուր Պահանջներ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմիս ներկայ Կանոնագրութիւնը գործադրելի է թուականէս սկսեալ:

Սոյն Կանոնագրութիւնը բարեփոխեալ եւ վաւերացեալ պատնէնն է Թեմիս Կանոնագրութեան, որ տարիներու ընթացքին ունեցաւ շարք մը բարեփոխումներ՝ որոնք վաւերացուեցան 1983-ի Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ:

Այդ թուականէն ի վեր կատարուած բարեփոխումները յօդուած 19-ի եւ 26-ի մէջ՝ վաւերացուեցան Մարտ 1995-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. Հայրապետին կողմէ, իսկ յօդուած 18-ի, 19-ի, 32-ի, 38-ի, 66-ի եւ 68-ի բարեփոխումները վաւերացուեցան Մայիս 2003-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Հայրապետին կողմէ:

Մայիս 13-15, 2010-ին գումարուած Թեմիս Երեսփոխանական Ժողովը հանգամանօրէն քննեց եւ լեզուական վերամշակումի ենթարկեց Թեմիս Կանոնագրութիւնը, կատարեց եզրերու միաձեւութիւն եւ յօդուածներուն հայերէն բնագրի եւ անգլերէն թարգմանութեան բաղդատութիւն, եւ գայն յոյս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան առ ի քննութիւն եւ վաւերացում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, իր 18 Դեկտեմբեր, 2010 թուակիր եւ 179/10 թուահամար պաշտօնագրով վաւերացուց Թեմիս վերամշակուած կանոնագրութիւնը իր հայերէն ու անգլերէն տարբերակներով, առ ի գործադրութիւն:

Մայիս 17-20, 2017-ին գումարուած Թեմիս Երեսփոխանական Ժողովը բարեփոխումներ կատարեց յօդուած 17, 19, 29 եւ 55-ի մէջ, որոնք եւս վաւերացուեցան 28 Նոյեմբեր, 2018-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ:

Կանոնագրութեան պաշտօնական բնագիրը հայերէնն է:

Անուշաւան Արքեպիսկոպոս Դանիէլեան
Առաջնորդ

Յունուար, 2019
Նիւ Եորք

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդուած 1

Ամերիկայի Արեւելեան Թեմի Հայ Եկեղեցին կը ներկայացնէ հոգեւոր միութիւն մը, որուն պաշտօնական տիտղոսն է Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի: Ան, իբրեւ անբաժան մասը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, կ'ընդունի եւ կը յարգէ հաւատֆի, պաշտամունքի եւ դաւանանքի մասին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ օրէնքներն ու կանոնները եւ կը ճանչնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Վեհափառ Հայրապետին հեղինակութիւնը, իր ներքին վարչական հարցերու մէջ պահելով ինքնավարութեան սկզբունքները:

Յօդուած 2

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, իր կրօնական, վարչական, կարգապահական եւ տնտեսական գործերը կը վարէ ըստ ներկայ Կանոնագրութեան տրամադրութեանց, որոնք որդեգրուած են Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ եւ վաւերացուած Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Կաթողիկոսութեան կողմէ:

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ենթակայ եկեղեցիներու բոլոր օրէնքները, կանոնները եւ ներքին վարչական գործունէութեան կարգը ամփոփուած են այս փաստաթուղթին մէջ:

Յօդուած 3

Ներկայ Կանոնագրութեան մէջ փոփոխութիւններ, յաւելումներ կամ յապաւումներ կրնան կատարուիլ Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ազգային Երեսփոխանական Ժողովի երկու երրորդի մեծամասնութեան ղեկներով եւ գործադրութեան կը դրուին երբ անոնք ղեկուած եւ վաւերացուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Վեհափառ Հայրապետին եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին կողմէ:

Կանոնագրութեան մէջ փոփոխութեան ռեւէ առաջարկ պէտք է գրաւոր կերպով ներկայացուի Թեմիս Ազգային Վարչութեան, Ազգային Երեսփոխանական Ժողովի յաջորդ գումարումէն առնուազն ինըսուն (90) օր առաջ, որպէսզի ղեկարկուի այդ Ժողովին կողմէ:

Յօդուած 4

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բոլոր պաշտօնեաները, եկեղեցական թէ աշխարհական, իրենց հոգեւոր եւ վարչական գործունէութեանց համար համարատու են Թեմիս Առաջնորդին եւ Ազգային Վարչութեան:

Յօդուած 5

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վարչական դրութիւնը հիմնուած է ժողովրդային ընտրութեան սկզբունքին վրայ՝ համաձայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կանոններուն եւ աւանդութեանց:

Յօդուած 6

Տասնըութ (18) տարիքը ամբողջացուցած բոլոր ծխականները կրնան ռեւէ ժողովի անդամ ընտրուիլ: Սակայն, Ազգային Երեսփոխանական ժողովի եւ Ազգային Վարչութեան անդամները պէտք է առնուազն քսանհինգ (25) տարիքը բոլորած ըլլան:

Յօդուած 7

Բոլոր պաշտօնեաները, ընտրեալ կամ նշանակեալ, վնարովի կամ անվնար, վերընտրելի են, ըստ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն:

Յօդուած 8

Յէ՛ւ անդամներուն պարզ մեծամասնութիւնը ներկայ է, բոլոր ժողովները, ներառեալ հոգաբարձութեանց, խորհուրդներու եւ յանձնախումբերու ժողովները օրինաւոր կը նկատուին, բացի այս Կանոնագրութեամբ յատկապէս նշուած պարագաներէն:

Յօդուած 9

Բացի այս Կանոնագրութեամբ յատկապէս նշուած պարագաներէն, բոլոր ընտրութիւնները պէտք է կատարուին գաղտնի քուէարկութեամբ:

Յօդուած 10

Եկեղեցական բոլոր ստացուածքները, շարժուն թէ անշարժ, ներառեալ բաժնեթուղթեր, եթէ օրուան գնով երեսուն հազար (\$30,000) տոլարէն աւելի կ'արժեն, կրնան գնուիլ, ծախուիլ կամ փոխանակուիլ հոգաբարձութեան կողմէ, պատկան Եկեղեցւոյ Անդամական կամ Բացառիկ ժողովին որոշումով միայն, համաձայն Կանոնագրութեան ՅՑ. Բ. Յօդուածին, ստանալէ յետոյ Ազգային Վարչութեան հաւանութիւնը:

Յօդուած 11

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սեփականութիւնը եղող բոլոր շարժուն եւ անշարժ կալուածները, ստացուածքները եւ ինչքերը պէտք է ըլլան եւ մնան նոյնինքն այդ Ընկերակցութեան (Corporation) հակակշռին տակ եւ պէտք չէ ենթակայ ըլլան ուրիշ ռեւէ անհատի կամ մարմնի հակակշռին: Այն պարագային երբ վերոյիշեալ Ընկերակցութիւնը լուծարուի կամ դադրի գոյութիւն ունենալէ, անոր ունեցուածքը կ'ենթարկուի հետեւեալ տնօրինութեանց.--

Ա. Նախ պետք է վնարուին Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բոլոր առկախ մնացած հաշուեցոյցներն ու պարտաւորութիւնները:

Բ. Մնացորդը պետք է բաշխուի, փոխանցուի, փոխադրուի, յանձնուի եւ վնարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Կաթողիկոսութեան, որ հաստատուած է Անթիլիաս-Լիբանան: Եթէ յիշեալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Աթոռը դադրած է գոյութիւն ունենալէ եւ կամ ռեւէ օրէնքի, կանոնի կամ հրամանագրի եւ կամ վարչական տնօրինութեամբ չկարենայ եւ կամ այլապէս մերժէ ընդունիլ այդ բաշխումը, փոխանցումը, փոխադրութիւնը եւ յանձնումը, այդ պարագային Ընկերակցութեան բոլոր ստացուածքները որոնք Ազգային Վարչութեան տրամադրութեան տակ են պետք է բաշխուին, փոխանցուին, փոխադրուին, յանձնուին, եւ վնարուին հաւասարապէս, Միացեալ Նահանգներու բոլոր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիներուն՝ որոնք մաս կը կազմեն Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վերոյիշեալ Ընկերակցութեան: Այն պարագային, երբ յիշեալ եկեղեցիները դադրած ըլլան գոյութիւն ունենալէ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ եւ կամ ռեւէ օրէնքի, կանոնի, հրամանագրի եւ կամ վարչական տնօրինութեամբ չկարենան եւ կամ այլապէս մերժեն ընդունիլ այդ բաշխումը, փոխանցումը, փոխադրութիւնը եւ յանձնումը, այդ պարագային, Ազգային Վարչութեան տրամադրութեան տակ գտնուող ստացուածքներն ու ինչքերը պետք է բաշխուին, փոխանցուին, փոխադրուին, յանձնուին եւ վնարուին Հայ համայնքային հիմնադրամի մը կամ հաստատութեան մը, որ կազմակերպուած է եւ կը գործէ միայն կրօնական, բարեսիրական, գրական կամ կրթական նպատակներու համար, պայմանաւ որ սոյն հիմնադրամին կամ հաստատութեան եկամուտին ռեւէ մէկ մասը ռեւէ բաժնետիրոջ անձնական շահ չի բերեր, որուն գործունէութեան մէջ չէ նախատեսուած ֆարոգչութիւն (բրոքերանտ) ընել, կամ այլապէս փորձել ազդել օրէնսդրութեան վրայ, չի մասնակցիլ կամ միջամտեր ռեւէ ֆաղափական ֆարոգչութեան կամ ֆաղափական եւ պետական պաշտօններու համար ընտրական թեկնածուներու ի նպաստ՝ յայտարարութիւններ հրատարակելով եւ ցրուելով: Նոյնպէս, պայմանաւ որ յիշեալ հիմնադրամն ու հաստատութիւնը յանձն առնէ յարգել Ազգային Վարչութեան կողմէ ճշդուած գումարներն ու համեմատութիւնները, որոնք պիտի յատկացուին վերոյիշեալ հիմնադրամին կամ հաստատութեան կանոնագրութեամբ նախատեսուած մման յարակից նպատակներու:

Բ.

**ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Յօդուած 12

Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ազգային Երեսփոխանական Ժողովը իշխանութիւն ունի վերահսկելու եւ ղեկավարելու իրեն ենթակայ եկեղեցական ու վարչական մարմինները:

Ազգային Երեսփոխանական Ժողովը կը բաղկանայ մէկ եօթներորդ եկեղեցական եւ վեց եօթներորդ աշխարհական երեսփոխաններու համեմատական թիւով:

Եկեղեցական երեսփոխանները կ'ընտրուին Թեմի Հոգեւորականաց Համագումարին կողմէ, գաղտնի բոււտարկութեամբ, իսկ աշխարհական պատգամաւորները կ'ընտրուին իրենց ծխական համայնքին կողմէ, գաղտնի բոււտարկութեամբ:

Յօդուած 13

Ազգային Երեսփոխանական Ժողովը մնայուն մարմին մըն է, թէեւ անոր կազմը փոփոխական է: Երեսփոխանները կ'ընտրուին չորս (4) տարուան շրջանի մը համար: Այն երեսփոխանները որոնք կը բոլորեն իրենց քառամեայ շրջանը՝ վերընտրելի են չորս տարուան ուրիշ շրջանի մը համար:

Երկրորդ քառամեայ շրջանի աւարտին, երկու (2) տարուան դադարէ ետք, երեսփոխան մը կրնայ դարձեալ ընտրուիլ:

Յօդուած 14

Ամէն տարի, Ազգային Վարչութեան հաւանութեամբ, Առաջնորդը ծխական համայնքներէն պէտք է պահանջէ, որ շրջանաւարտ կամ այլապէս դադարեալ երեսփոխաններուն տեղ նորերը ընտրեն:

Յօդուած 15

Ամէն ծխական համայնք Ազգային Երեսփոխական Ժողովին մասնակցելու իրաւունք ունի առնուազն երկու պատգամաւորներով:

Ա. Ծխական համայնքի մը երեսփոխաններուն թիւը կը սահմանուի հետեւեալ սկզբունքով.–

Մինչեւ 99 տրատու անդամ – երկու երեսփոխան

100-199 տրատու անդամ – երեք երեսփոխան

200-299 տրատու անդամ – չորս երեսփոխան

300-399 տրատու անդամ – հինգ երեսփոխան

400-499 տրատու անդամ – վեց երեսփոխան

500-էն վեր տրատու անդամ – եօթը երեսփոխան

Ոչ մէկ ծխական համայնք կրնայ Ազգային Երեսփոխանական Ժողովին մասնակցիլ եօթէն (7) անլի երեսփոխաններով:

- Բ. Իւրաքանչիւր լիազօր երեսփոխան մէկ բուէի իրաւունք ունի եւ իր բուէն փոխանցելի չէ:
- Գ. Ամէն երեսփոխան իրաւունք ունի մասնակցելու Ազգային Երեսփոխանական Ժողովին՝ ներկայացնելով իր լիազօրագիրը, հաստատուած պատկան ծխական համայնքի Հոգեւոր Հովիւին եւ Հոգաբարձութեան Ատենապետին ստորագրութիւններով ու ծխական համայնքի կնիքով:

Յօդուած 16

Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամները կ'ընտրուին համաձայն այս Կանոնագրութեան սահմանած օրէնքներուն եւ կանոններուն:

Յօդուած 17

- Ա. Ազգային Երեսփոխանական Ժողովը կը գումարուի ամէն տարի Մայիս ամսուան մէջ: Ժողովին վայրը եւ թուականը կը ճշդէ Ազգային Վարչութիւնը:
- Բ. Ազգային Երեսփոխանական Ժողովի գումարումէն առնուազն երեսուն (30) օր առաջ, Ազգային Վարչութիւնը Ժողովի թուականին եւ վայրին մասին պէտք է տեղեակ պահէ իւրաքանչիւր երեսփոխանը:
- Գ. Ազգային Երեսփոխանական Ժողովի գումարման թուականէն նուագագոյնը եօթը օր առաջ, Ազգային Վարչութիւնը երեսփոխաններուն պէտք է դրկէ օրինակ մը Ժողովին համար առաջարկուած օրակարգէն, Ազգային Վարչութեան (կրօնական եւ աշխարհական) Ժողովի տարեկան տեղեկագիրը, Ազգային Վարչութեան տարեկան հաշուեկշիռը, Ազգային Վարչութեան տարեկան հաշուեկշիռի մասին արտաքին հաշուապահի մը կողմէ կատարուած վերաքննութիւնը, նախահաշիւ պիւտճէն, առաջարկուած կանոնագրային փոփոխութիւններ, ինչպէս նաեւ առաջարկուած բանաձեւեր եւ այլ առաջարկներ, որոնք Ազգային Վարչութեան կողմէ կը ներկայացուին իւրաքանչիւր Ազգային Երեսփոխանի:
- Դ. Ազգային Երեսփոխանական Ժողովի արտակարգ նիստեր կրնան գումարուիլ Ազգային Վարչութեան հրաւերով եւ կամ պաշտօնի վրայ գտնուող երեսփոխաններու նուագագոյն մէկ երրորդին գրաւոր պահանջով:

Յօդուած 18

- Ա. Ազգային Երեսփոխանական Ժողովին կը նախագահէ Առաջնորդը, իսկ անոր բացակայութեան՝ Առաջնորդական Տեղապահը, եթէ Առաջնորդական Տեղապահ կայ:
- Բ. Առաջնորդը կը հրաւիրէ նախորդ տարուան Ազգային Երեսփոխանական Ժողովի ատենապետներէն մէկը, որպէսզի ժամանակաւոր ատենապետի պաշտօնը վարէ, եւ նախորդ տարուան Ազգային Երեսփոխանական Ժողովի ատենադպիրներէն մէկը, որ-

պէսզի ժամանակաւոր ատենադպիրի պաշտօնը վարէ: Նախորդ տարուան ատենապետներուն եւ ատենադպիրներուն բացակայութեան պարագային, Առաջնորդը կը հրաւիրէ երկու երեսփոխաններ, որոնք իր հայեցողութեամբ կարողութիւնը ունին ձեռնհասօրէն վարելու առժամեայ ատենապետի ու ատենադպիրի պարտականութիւնները:

- Գ. Առժամեայ Դիւանին պարտականութիւնն է ստանալ լիազօրագրերու մասին Ազգային Վարչութեան ներկայացուցած գեկոյցը, լուծել երեսփոխաններու լիազօրագրերուն հետ առնչուող բոլոր հարցերը եւ ապա միայն ընտրել ժողովին մնայուն Դիւանը:
- Դ. Ազգային Երեսփոխանական Ժողովը իր Դիւանը կ'ընտրէ գաղտնի ֆուէրկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ: Դիւանը կը բաղկանայ երկու ատենապետներէ եւ երկու ատենադպիրներէ, որոնցմէ մէկը ատենագրութիւնը կ'արձանագրէ Հայերէնով, իսկ միւսը՝ Անգլերէնով:
- Ե. Մնայուն Դիւանի պաշտօնավարութեան շրջանը կ'աւարտի Ազգային Երեսփոխանական Ժողովի փակումով:

Յօդուած 19

Ազգային Երեսփոխանական Ժողովի իրաւունքներն ու պարտաւորութիւններն են .--

- Ա. 1. Հաստատել Ազգային Երեսփոխանական Ժողովին մասնակից երեսփոխաններուն լիազօրագրերը: Երեսփոխաններուն լիազօրագրերու հաստատումը կը կատարուի ստանալէ ետք լիազօրագրերու մասին Ազգային Վարչութեան ներկայացուցած գեկոյցը, որ ժողովը կրնայ ընդունիլ, մերժել, կամ բարեփոխուած կերպով իւրացնել: Լիազօրագրերու մասին Ազգային Վարչութեան ներկայացուցած գեկոյցը պէտք է պարունակէ իւրաքանչիւր եկեղեցւոյ թեմական տուրքի (ֆոթա) վճարումներուն ցուցակը, Հոգեւոր Հովիւին կողմէ պատգամաւորներուն ինքնութիւնը ճշդող հաստատագիրը եւ պատգամաւորի մը կամ պատգամաւորներուն ժողովին մասնակցելու կամ չմասնակցելու կարգավիճակը ճշդող Ազգային Վարչութեան յանձնարարութիւնը: Երբ Ազգային Վարչութիւնը լիազօրագրերու մասին գեկոյց չի ներկայացներ, Երեսփոխանական Ժողովը կ'ընտրէ երեք պատգամաւորներէ բաղկացած Լիազօրագրերու Յանձնախումբ մը, որ կը ֆննէ պատգամաւորներուն լիազօրագրերը եւ գեկոյց կը ներկայացնէ: Զեկոյցը կ'ընդունուի, կը մերժուի կամ բարեփոխուած կերպով կ'իւրացուի ժողովին կողմէ:
- Ա. 2. Ընտրել հինգ երեսփոխաններէ բաղկացեալ Ընտրողական Յանձնախումբ մը, որ ընտրութեանց համար պիտի պատրաստէ եւ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացնէ ընտրելիներու թիւին համեմատ թեկնածուներու երկպատիկ ցանկ մը: Թեկնածուներու ցանկին մէջ պէտք է ներառնել իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտող եւ սակայն վերընտրուելու իրաւունք ու պատրաստակամութիւն ունեցող անձերը: Յանձնախումբը պէտք է հսկէ բոլոր ընտրութիւններուն, ստուգէ ֆուէրկութեանց արդիւնքը եւ զայն ներկայացնէ Ազգային Երեսփոխանական Ժողովին:

- Բ. Քննել Ազգային Երեսփոխանական Ժողովին առաջարկուած օրակարգը, անոր մէջ կատարել անհրաժեշտ փոփոխութիւններ, եւ որդեգրել Ժողովի վերջնական օրակարգը:
- Գ. Ընտրել հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներ՝ մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Կաթողիկոսի ընտրութեան:
- Դ. Ընտրել աշխարհական պատգամաւորներ՝ մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Ազգային Ընդհանուր Ժողովին:
- Ե. Խմբագրել եւ հրատարակել ուղեգիծներ եւ թելադրութիւններ եկեղեցապատկան կալուածներու գործածութեան եւ հաստատութիւններու ու հիմնադրամներու օգտագործումին համար, համաձայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կանոններուն եւ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն:
- Զ. Ընդունիլ կամ մերժել ընդունիլ Առաջնորդին հրաժարականը:
- Է. Ընտրել Առաջնորդը եւ անոր ընտրութեան մասին տեղեկագրել Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Վեհափառ Հայրապետին եւ խնդրել անոր վաւերացումը: Արդարացի եւ իրաւացի պատճառներով, պահանջել Առաջնորդին հրաժարականը եւ Վեհափառ Հայրապետին ներկայացնել մանրամասնեալ գրաւոր տեղեկագիր ու խնդրել անոր թելադրանքներն ու ցուցմունքները:
- Ը. Ընտրել Ազգային Վարչութեան անդամները եւ բաւարար ու արդարացի պատճառներու պարագային պահանջել ուժեղ անդամի հրաժարականը:
- Թ. Նկատի առնել Առաջնորդին դէմ եղած բողոքները, եւ ի հարկին քննութիւն կատարել: Սերտել, լսել եւ դատել Ազգային Վարչութեան դէմ եղած բողոքները, եւ տնօրինել պարտն ու պատշաճը:
- Ժ. Քննել Ազգային Վարչութեան հաշուկշիտը եւ այդ հաշուեկշիտի մասին արտաքին հաշուապահի մը կողմէ կատարուած վերաքննութիւնը, եւ այդ մասին կատարել ուժեղ առաջարկ, որ Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ յարմար կը նկատուի:
- ԺԱ. Վերաքննել Ազգային Վարչութեան կողմէ ներկայացուած նախահաշիւ պիւտճէն եւ պարզ մեծամասնութեան քուէներով Առաջնորդարանի համար որդեգրել տարեկան պիւտճէ մը:
- ԺԲ. Նկատի ունենալ բոլոր այն հարցերն ու առաջարկները, որոնք կը ներկայացուին երեսփոխաններուն, Առաջնորդին, Ազգային Վարչութեան կամ ծխական համայնքներուն կողմէ եւ տնօրինել պարտն ու պատշաճը:
- ԺԳ. Զայնելու պարզ մեծամասնութիւնը այն երեսփոխաններուն, որոնց լիազօրագրերը ընդունուած են Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ, բաւարար է որոշելու ուժեղ հարց որ նախատեսուած է այս Կանոնագրութեան 19-րդ Յօդուածին մէջ:

Յօդուած 20

Երեսփոխաններու նամբորդութեան եւ յարակից այլ ծախսերը պէտք է հոգացուին եկեղեցիներու Հոգաբարձութեանց կողմէ՝ համաձայն իրենց Անդամական Ժողովներու կողմէ ընդունուած որոշումներուն:

Գ.

ԱՌԱՋՆՈՐԴ

Յօդուած 21

Առաջնորդը կը նախագահէ ժողովներուն եւ կը հսկէ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններու գործադրութեան: Թեմակալ Առաջնորդը կամ Առաջնորդական Տեղապահը բուէի իրաւունք չունի:

Յօդուած 22

Առաջնորդը կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական ժողովին կողմէ՝ գաղտնի բուէարկութեամբ՝ չորս տարուան համար, եւ վերընտրելի է:

Յօդուած 23

Առաջնորդական Աթոռը թափուր մնալու պարագային՝ Առաջնորդական Տեղապահ մը կ'ընտրուի Ազգային Վարչութեան կողմէ: Տեղապահը կը կատարէ Առաջնորդի բոլոր ընթացիկ պարտականութիւնները մինչեւ նոր Առաջնորդի մը ընտրութիւնը:

Յօդուած 24

Առաջնորդարանիստ քաղաքը Նիւ Եորքն է: Առաջնորդարանը կրնայ փոխադրուիլ ուրիշ ոեւէ շրջան Ազգային Երեսփոխանական ժողովի երկու երրորդի (2/3) մեծամասնութեան ձայնով:

Յօդուած 25

Առաջնորդի պարտականութիւններն են. –

Ա. Այցելել Թեմիս ծխական համայնքները:

Բ. Մօտէն հետեւիլ եկեղեցականներու, եկեղեցիներու, եկեղեցական համայնքներու եւ կրթական ու բարեսիրական հաստատութեանց գործունէութեան, եկեղեցապատկան կալուածներու վիճակին, եւ անհրաժեշտ ու ստիպողական պարագաներուն պատշաճ տնօրինել եւ ապա զեկոյց մը ներկայացնել Ազգային Վարչութեան:

Գ. Հետեւիլ եւ հսկել, որպէսզի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ ծէսերը, արարողութիւնները, կանոններն ու վարդապետութիւնը ուղիղ ձեւով կատարուին եւ կիրարկուին:

Դ. Ստուգել ամուսնական թեկնածուներու վերաբերող հարցեր, եւ ըստ այնմ արտօնել կամ արգիլել անոնց պսակը:

Ե. Առաջնորդուիլ այս Կանոնագրութեան սկզբունքներով եւ տրամադրութիւններով եւ ապահովել անոր անթերի գործադրութիւնը:

Զ. Այս Կանոնագրութեան տրամադրութիւնները զեղծողներուն մասին պատկան եկեղեցոյ իշխանութիւնները զգուշացնել եւ պահանջել զեղծում կատարած անձերուն հրաժարականը, ըլլան անոնք ընտրուած պաշտօնատար թէ նշանակուած պաշտօնեայ, վերաբուող թէ անվերաբ:

- է. Ձեռնադրելի ֆահանգներ եւ սարկաւազներ, որոնք կը յանձնարարուին ծխական Անդամական ժողովներու կողմէ եւ կ'արժանանան Ազգային Վարչութեան հաւանութեան: Վարդապետներու ձեռնադրութիւն կարելի է կատարել միայն Վեհափառ Հայրապետի արտօնութեամբ:
- Ը. Ազգային Վարչութեան հետ խորհրդակցելէ ետք, Վեհափառ Հայրապետին ներկայացնել Հոգաբարձութեանց կողմէ առաջարկուած եւ յանձնարարուած եկեղեցականներու յատուկ պարգեւատրումի դիմումներ՝ Լանջախաչ գործածելու, ինչպէս նաեւ Ծաղկեայ Սեւ Փիլոն կրելու իրաւունք եւ Աւագութեան տիտղոս:

Դ.

**ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
(Խառն ժողով)**

Յօդուած 26

Ազգային Վարչութիւնը կազմուած է երկու (2) անջատ մարմիններէ, որոնք կանոնաւոր կերպով իրենց ժողովները կը գումարեն միասնաբար:

- Ա. Կրօնական ժողով, բաղկացեալ երեք (3) կամ հինգ (5) եկեղեցականներէ:
- Բ. Վարչական ժողով, բաղկացեալ եօթը (7) կամ ինը (9) աշխարհականներէ:
- Գ. Ամէն տարի, երկու ժողովներու անդամներուն կէսը կը դադրի եւ լրացուցիչ ընտրութիւններ կը կատարուին Ազգային Երեսփոխանական ժողովի ընթացքին:
- Դ. Ազգային Վարչութեան անդամները կ'ընտրուին երկու (2) տարուան պաշտօնավարութեան համար եւ իրենց ընտրութիւնը պէտք է վաւերացուի Վեհափառ Հայրապետին կողմէ: Վարչական ժողովի այն անդամները, որոնց շրջանը կ'աւարտի, կրնան յաջորդական երկու (2) շրջանի համար վերընտրուիլ: Ամբողջացնելէ ետք յաջորդական երեք (3) շրջաններ, Վարչական ժողովի անդամները կրնան դարձեալ ընտրուիլ երկու (2) տարուան դադարէ ետք:

Յօդուած 27

Ազգային Վարչութիւնը լուծուած կը համարուի, երբ իր անդամներու մեծամասնութիւնը կը հեռանայ կամ կը հրաժարի: Նման պարագայի, Թեմակալ Առաջնորդին հրաւերով Ազգային Երեսփոխանական ժողովի բացառիկ նիստ կը գումարուի նոր Ազգային Վարչութիւն մը ընտրելու համար: Ազգային Վարչութեան նախորդ կազմին այն անդամները, որոնք արգելիչ պատճառ մը չունին, վերընտրելի են:

Յօդուած 28

Ազգային Վարչութեան անդամ մը կրնայ իր ծխական համայնքի Հոգաբարձութեան մաս կազմել, սակայն չի կրնար Հոգաբարձութեան Դիւանին անդամ ըլլալ:

Յօդուած 29

Ազգային Վարչութեան իրաւունքները, պարտականութիւններն ու պարտաւորութիւններն են.–

Ա. Քննել եւ հաստատել ծխական համայնքներու անդամական ժողովներուն կողմէ որդեգրուած բոլոր բանաձեւերն ու կատարուած ընտրութիւնները, կամ, յետ քննութեան, անվաւեր եւ չեղեալ յայտարարել այդ բանաձեւերն ու ընտրութիւնները, առնուած որոշումին համար գրաւոր եւ մանրամասն բացատրութիւն տալով պատկան ծխական համայնքին:

Բ. Ազգային Առաջնորդարանի կարիքներուն համաձայն, վարչական անձնակազմ նշանակել, սահմանել անոնց թոշակները եւ վերահսկել անոնց գործունէութեան:

Գ. Քննել եւ դատել Հոգաբարձութեանց եւ եկեղեցիներու յարակից կրթական հաստատութիւններուն ու անոնց պաշտօնէութեան միջեւ ծագած տարակարծութիւնները, ինչպէս նաեւ այդ կրթական հաստատութիւններուն եւ պաշտօնէութեան դէմ եղած բողոքները:

Դ. Բարելաւելու համար Ազգային Առաջնորդարանին եկամուտը, սահմանել ձեւեր եւ ապահովել միջոցներ եւ վերոյիշեալ նպատակին համար առաջարկներ ներկայացնել Ազգային Երեսփոխանական ժողովին:

Ե. Նախաձեռնել հետեւեալը.

1) Վարել Առաջնորդարանի տնտեսական գործերը համաձայն Ազգային Երեսփոխանական ժողովի որդեգրած տարեկան պիւտնէին:

2) Պատրաստել ելեւմտական հաշուեցոյցներ համաձայն Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ ոչ-շահաբեր կրօնական կազմակերպութիւններուն համար ընդունուած սկզբունքներուն եւ առնուազն տարեկան դրութեամբ, այդ հաշուեցոյցները փոխանցել Ազգային Երեսփոխանական ժողովի անդամներուն:

3) Նախահաշիւ պիւտնէ մը ներկայացնել Ազգային Երեսփոխանական ժողովի անդամներուն անոնց նկատարման համար՝ տարեկան անոնց ժողովի ընթացքին:

4) Կառավարել Առաջնորդարանի բոլոր կալուածական ունեցուածքները:

5) Վարել Առաջնորդարանի զանազան անձեռնմխելի հիմնադրամները եւ սահմանափակեալ հիմնադրամները:

6) Ըստ յարմարութեան եւ կատարուած խնդրանքներու համաձայն, ստանձնել խնամակալութիւնը ծխական համայնքներու եւ յարակից մարմիններու պատկանող անձեռնմխելի կամ սահմանափակեալ հիմնադրամներու:

Զ. Առաջնորդարանը իրաւասութիւն ունի՝ իր իրաւական անուան արձանագրելու ծխական ռեւէ եկեղեցի կամ կալուած, եթէ երբեք այդ մասին խնդրանք ներկայացնէ պատկան եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, Անդամական ժողովի գրաւոր հաւանութեամբ:

Առաջնորդարանը, նմանապէս, բոլոր ընդունելի պարագաներուն եւ իր հայեցողութեամբ պատրաստակամ պիտի գտնուի համատեղ ստորագրելու կամ երաշխաւորելու ռեւէ խոստմնագիր, կալուածագիր կամ պարտամուրհակ՝ ծխական եկեղեցիի մը գնման, կառուցման կամ հիմնական նորոգութեան կամ բարեփոխութեան առիթներով, եթէ երբեք պատկան Հոգաբարձութիւնը նման խնդրանք ներկայացնէ, եւ եթէ

դրամատունը կամ փոխատու գործակալութիւնը յօժար ըլլայ ընդունելու Առաջնորդարանի ստորագրութիւնը:

Առաջնորդարանը, այնուամենայնիւ, իրեն կը վերապահէ նման յանձնառութիւն ընդունելու կամ մերժելու իրաւունքը, եթէ երբեք ակներեւ դառնայ որ պատկան ծխական շրջանը, բնականոն պայմաններու մէջ, կարելիութիւն պիտի չունենայ յարգելու իր յանձնառութիւնները՝ խնդրոյ առարկայի գնման, կառուցման, նորոգութեան կամ բարեփոխութեան կապակցութեամբ:

- է. Գրաւոր կերպով, գոհացուցիչ մանրամասնութեամբ եւ ստացման թուականին յաջորդող երեսուն (30) օրերու ընթացքին պատասխանել ծխական շրջանի մը Անդամական Ժողովէն կամ Հոգաբարձութենէն ստացուած բոլոր նամակներուն, հարցումներուն եւ Ազգային Վարչութենէն սպասուած խորհուրդներուն:
- Ը. Պահպանել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնական կանոնները եւ պահանջել անոնց գործադրութիւնը, եւ ամէն ճիշդ թափել գորացնելու իրեն ենթակայ բոլոր ծխականներուն հոգեւոր կեանքն ու տիպար ֆաղաֆացիի առաքինութիւնները:
- Թ. Վերահսկել իրեն ենթակայ բոլոր եկեղեցական-ծխական հաստատութեանց եւ անոնց պատասխանատուներուն գործունէութեանց վրայ:
- Ժ. Լաւապէս ուսումնասիրել ծխական շրջաններէն ներս եկեղեցիներ հաստատելու պարագան եւ Ազգային Առաջնորդարանին կապուած կրթական եւ բարեսիրական հաստատութեանց վերաբերեալ հարցերը:
- ժԱ. Աջակցիլ Ազգային Առաջնորդարանի եկեղեցական իշխանութեանց եւ պատասխանատուներուն՝ յորդորներով եւ պատշաճ ցուցումներով: Հսկել անոնց գործունէութեանց վրայ, ի պահանջել հարկին պաշտօնի կոչել բաւարար թիւով անձնակազմ, վարչական՝ եւ ոչ-վարչական գործունէութեան համար, համաձայն այս Կանոնագրութեան ճշդած պայմաններուն ու տրամադրութիւններուն:
- ժԲ. Նշանակել Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդ մը, որ Թեմի Կիրակնօրեայ վարժարաններուն եւ կրօնական դաստիարակութեան աշխատանքներուն վերահսկողութիւնը կատարէ: Նշանակել Դպրաց Դասերու Կեդրոնական Յանձնախումբ մը, որ պէսզի եկեղեցիներու դպրաց դասերուն աշխատանքին հսկէ, եւ ֆիննարկումի ու վաւերացումի համար անոնց տարեկան գործունէութեան տեղեկագիրն ու հաշուեկշիռը պահանջէ:
- ժԳ. Ստանալ Տարեկան Տեղեկագիրներ բոլոր ծխական շրջաններու Հոգաբարձութիւններէն եւ Հոգեւոր Հովիւներէն, հսկելու եւ ուղղութիւն տալու համար անոնց գործունէութեան:
- ժԴ. Լսել, ուսումնասիրել եւ դատել, վաթսուն (60) օրերու ընթացքին՝
 1. Գանգատներ եւ բողոքներ՝ ներկայացուած եկեղեցական կազմակերպութեանց եւ անոնց պատասխանատուներուն կողմէ:
 2. Գանգատներ եւ բողոքներ, որոնք կատարուած են եկեղեցական կազմակերպութեանց եւ անոնց պատասխանատուներուն դէմ:
 3. Տարակարծութիւններ՝ որոնք կրնան ծագիլ հոգեւորականներուն եւ ծխականներուն միջեւ:

- ժԵ. Նշանակել յանձնախումբեր, որպէսզի բնենն եկեղեցիներու, համայնֆային կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու վերաբերող հարցեր եւ հաշիւներ, երբ Ազգային Վարչութիւնը անհրաժեշտ գտնէ:
- ժԶ. Ընտրել Առաջնորդական Տեղապահ՝ երբ Առաջնորդական Աթոռը թափուր մնայ, եւ խորհրդակցաբար անոր հետ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետէն խնդրել Առաջնորդի ընտրութեան համար թեկնածուներու ցանկ մը, եւ յաջորդ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացնել՝ նոր Առաջնորդի ընտրութիւնը կատարելու համար:
- ժԷ. Վեհափառ Հայրապետին ներկայացնել Տարեկան Տեղեկագիր՝ Թեմի վիճակին մասին:
- ժԸ. Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացնել տարեկան իր գործունէութեան մասին ամբողջական տեղեկագիր մը:
- ժԹ. Պահել տպագրեալ եւ մանրամասնեալ ցուցակներ՝ եկեղեցական-ծխական բոլոր հաստատութեանց, իմա՝ եկեղեցիներու, դպրոցներու, գրադարաններու եւ այլ հիմնարկութեանց, անոնց շարժուն եւ անշարժ գոյքերով միասին:

Յօդուած 30

- Ազգային Վարչութեան եկամուտի աղբիւրներն են --
- Ա. Թեմական եւ Ս. Աթոռի տուրքեր, որոնք ծխական շրջաններուն վրայ կը դրուին Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ:
- Բ. Պսակադրութեան եւ Մկրտութեան վկայագիրներու սակեր, որոնք կը սահմանուին Ազգային Վարչութեան կողմէ:
- Գ. Նուիրատուութիւններ, աւանդներ եւ կալուածային կտակներ:
- Դ. Եկամուտներ, որոնք կը գոյանան անշարժ եւ շարժուն կալուածներէն եւ կամ անոնց վաճառքէն:
- Ե. Հանգանակային զանազան ձեռնարկներէ գոյացած հասոյթներ եւ եկամուտներ:

Ե.

ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Յօդուած 31

Եկեղեցիի մը անդամները, հոգեւորական պաշտօնեաներուն հետ, կը կազմեն ծխական համայնք մը:

Այն շրջանները, որոնք եկեղեցի չունին, Ազգային Վարչութեան հաւանութեամբ կրնան կազմել ծխական համայնք մը եւ ընտրել իրենց Հոգաբարձութիւնը, կամ կրնան կապուիլ մօտակայ եկեղեցիի մը ծխական համայնքին:

Նոր ծխական համայնքներ կրնան կազմուիլ կամ մեծ ծխական համայնք մը կրնայ մէկէ աւելի ծխական համայնքներու վերածուիլ Ազգային Վարչութեան հաւանութեամբ միայն:

Յօդուած 32

Ծխական համայնքի մը անդամ կրնան դառնալ, առանց սեռի խտրութեան, բոլոր անոնք, որոնք մկրտուած եւ դրոշմուած են Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, եւ կամ անոնք, որոնք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ միացած են Հայ Եկեղեցւոյ խորհուրդներուն միջոցաւ, այսինքն՝ մկրտութեամբ, դրոշմով եւ ամուսնութեամբ, յանձնառու դարձած են յարգելու Հայ Եկեղեցւոյ աւանդական պարտաւորութիւնները, հետեւելու եկեղեցական կանոններուն եւ ընդունելու այս Կանոնագրութեան բոլոր տրամադրութիւնները:

Անդամներուն անունները պէտք է արձանագրուին անդամական տոմարին մէջ:

Անձ մը կրնայ անդամ ըլլալ միայն մէկ ծխական համայնքի:

Յօդուած 33

Բոլոր տրատու անդամները որոնք բոլորած են տասներուքը (18) տարիքը, կատարած են իրենց պարտաւորութիւնները եւ արձանագրուած են ծխական համայնքի մը Անդամական Տոմարին մէջ՝ ժողովի թուականէն առնուազն վեց (6) ամիս առաջ, իրաւասու են մասնակցելու այդ ծխական համայնքի Անդամական Ժողովին՝ փուէարկելու, ընտրելու եւ ընտրուելու իրաւունքով:

Տրատու անդամ մը ընտրութեան մասնակցելու եւ կամ Անդամական Ժողովին մէջ փուէարկելու համար, պարտի ներկայ ըլլալ փուէարկութեան ժամուն եւ ստորագրել այդ ժողովի Անդամական Տոմարին մէջ:

Տրատու անդամ մը եթէ նոյնիսկ ստորագրած ըլլայ Անդամական Տոմարին մէջ ժողովի գումարման ատեն, չի կրնար փուէն տալ փուէարկութեան համար նշդուած ժամանակէն առաջ կամ ետք:

Յօդուած 34

Ոնէ ծխական համայնքի անդամ դառնալ կամ մնալ չեն կրնար ամէն անոնք որոնք՝

Ա. Դատարանի կողմէ գրկուած են իրենց քաղաքացիական իրաւունքներէն.

Բ. Ապաշխարանքի ենթարկուած են Հոգեւոր Իշխանութեան կողմէ.

Գ. Ձեռն վնարած իրենց անդամատուրքերը համաձայն այս Կանոնագրութեան տրամադրութեանց, ինչպէս նաեւ Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ բանաձեւուած եւ Անդամական Ժողովին կողմէ ընդունուած կանոններուն:

Յօդուած 35

Տրատու անդամակցութեան հետեւեալ պայմանները գործադրելի են բոլոր ծխական համայնքներուն համար.՝

Ա. Բոլոր անոնք, որոնք տասներուք (18) տարեկան եւ վեր են եւ որոնք կը փափաքին եկեղեցւոյ անդամ դառնալ, պարտին վնարել Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ

նշողուած անդամատուրքը:

- Բ. Անդամատուրքերը վնարելի են տարուէ տարի: Երբ անդամ մը անդամատուրքի յետնեալ պարտքեր ունենայ, Հոգաբարձութեան պարտականութիւնն է նախ ենթակային պարտքը գանձել եւ ապա անոր շնորհել բուէարկութեան իրաւունք:

Զ.

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդուած 36

Հոգեւոր Հովիւները, Եկեղեցւոյ այլ հոգեւորական պաշտօնեաները եւ տրատու անդամները կը կազմեն Անդամական Ժողովը:

Յօդուած 37

Անդամական Ժողովներ կը գումարուին առնուազն տարին մէկ անգամ: Տարեկան առաջին ժողովին, Բնութեան կ'ենթարկուին եւ կը վաւերացուին նախորդ տարեշրջանի նիւթական հաշիւները:

Ծխական համայնքի տարեկան Անդամական երկրորդ Ժողովի գումարման պարագային օրակարգի նիւթ կրնան կազմել հետեւեալ հարցերը --

1. Հոգաբարձական եւ յարակից օժանդակ մարմիններուն նիւթաբարոյական տեղեկագիրներու վաւերացումը:
2. Հաշուեմնիչ Յանձնախումբին գեկոյցը:
3. Վաւերացումի համար ներկայացուած յաջորդ տարուան պիւտեմէն:
4. Հոգաբարձական անդամներուն, ազգային երեսփոխաններուն եւ այլ յանձնախումբերու անդամներուն ընտրութիւնը:

Յօդուած 38

Հոգեւոր Հովիւը եւ Հոգաբարձութիւնը պարտին բացառիկ Անդամական Ժողով հրաւիրել հետեւեալ պարագաներուն --

- Ա. Ազգային Վարչութեան հաւանութիւնը ստանալէ ետք կատարել Հոգեւոր Հովիւի ընտրութիւնը: Հոգեւոր Հովիւի ընտրութիւնը պէտք է կատարուի ներկաներու երկու երրորդի մեծամասնութեան ձայնով, պայմանաւ որ Ժողովին ներկայ եղողներուն թիւը կազմէ անդամներու ընդհանուր թիւին երեսուն առ հարիւրը:
- Բ. Եկեղեցական ոեւէ կալուածի նախատեսուած գնում կամ վաճառում, ներառեալ բաժնեթուղթեր եւ մուրհակներ, որոնց արժէքը երեսուն հազար (\$30,000) տուարէն աւելի է: Նման գնումի եւ վաճառումի պարագային անհրաժեշտ է ներկայ անդամներուն առնուազն երկու երրորդի (2/3) մեծամասնութեան բուէն եւ ներկայ Կանոնագրութեան Յօդուած 10-ի տրամադրութեանց յարգումը:

- Գ. Երբ Հոգաբարձութիւնը կը կորսնցնէ իր կազմին մեծամասնութիւնը, անդամներու հրաժարումով կամ այլ պատճառներով:
- Դ. Տրատու անդամներու մէկ երրորդի գրաւոր պահանջին վրայ:
- Ե. Երբ Հոգեւոր Հովիւն ու Հոգաբարձութիւնը նման ժողովի մը անհրաժեշտութիւնը զգան:
- Զ. Երբ Ազգային Վարչութիւնը նման ժողովի մը գումարումը հարկ նկատէ:

Յօդուած 39

Անդամական ժողովները պէտք է գումարուին Եկեղեցւոյ սրահին մէջ կամ յարմար տեղ մը:

Յօդուած 40

Անդամական ժողովի գումարումէն առնուազն շարաք մը առաջ, համայնքի անդամները ժողովի մասին պէտք է տեղեակ պահուին հետեւեալ միջոցներով.-

1. Հրաւեր նամակով, որուն կցուած պէտք է ըլլայ օրակարգը եւ ընտրութեան համար ներկայացուած թեկնածուներուն անուանացանկը:
2. Հոգեւոր Հովիւին կողմէ քարոզէն առաջ կամ վերջ կատարուած յայտարարութեամբ:
3. Եկեղեցւոյ ծանուցումներու ցուցատախտակին վրայ գետեղուած գրաւոր ազդով:
4. Եկեղեցւոյ պաշտօնաթերթին մէջ գետեղուած ծանուցումով:
5. Շրջանին մէջ հրատարակուող Հայկական մամուլի կամ եկեղեցական թերթիկին մէջ գետեղուած ծանուցումով:

Յօդուած 41

Անդամական ժողովի մը մասնակցող բոլոր իրաւասու անդամները պարտին ստորագրել՝ այդ նպատակին համար տրամադրուած անդամատետրին մէջ:

Յօդուած 42

Ոեւէ Անդամական ժողովի համար արձանագրուած անդամներուն ընդհանուր թիւին երեսուն առ հարիւրին (30%) ներկայութիւնը մեծամասնութիւն կը համարուի: Եթէ առաջին ժողովի մը կարելի չըլլայ մեծամասնութիւն գոյացնել, երկրորդ ժողով մը պէտք է հրաւիրուի, որուն ընթացքին իրաւասու անդամներուն ներկայութիւնը, ինչ թիւ որ ներկայացնէ, օրինաւոր մեծամասնութիւն կը համարուի: Երկրորդ ժողովի ծանուցումը կարելի է կցել առաջին ժողովի ծանուցումին:

Յօդուած 43

Անդամական ժողովի նիստերը կը գումարուին դռնբաց. կրնան գումարուիլ նաեւ դռնփակ, եթէ ժողովը այդպէս որոշէ:

Յօդուած 44

Անդամական ժողովին կը նախագահէ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը: Սակայն, եթէ Առաջնորդը կամ Առաջնորդական Տեղապահը ներկայ է, ան կը նախագահէ:

Յօդուած 45

Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը կը բանայ ժողովը, եւ կ'առաջարկէ ընտրել Ատենապետ, Փոխ-Ատենապետ եւ Ատենադպիրներ: Հոգեւոր Հովիւը պարտի ներկայ գտնուիլ մինչեւ ժողովին փակումը, հսկել ժողովին կանոնաւոր ընթացքին ու Կանոնագրութեան տառացի գործադրութեան վրայ եւ, ի վերջոյ, ինք եւ Դիւանը պարտին ստուգել եւ ստորագրել ժողովի ատենագրութիւնը:

Յօդուած 46

Անդամական ժողովի մը Դիւանը կը կազմեն Ատենապետը, Փոխ-Ատենապետը եւ մէկ կամ երկու Ատենադպիրները:

Յօդուած 47

Ատենապետը կը կարգայ ժողովին օրակարգը: Միայն օրակարգին մէջ տեղ գտած հարցերը կրնան քննարկուիլ:

Յօդուած 48

Ատենապետին պարտականութիւններն են.–

Ա. ժողովը վարել կանոնաւոր կերպով:

Բ. ժողովէն հեռացնել անկարգապահ ոչ-անդամները:

Գ. Երկու անգամ ի կարգ հրաւիրել անկարգապահ ժողովական մը եւ ապա գրկել գայն խօսելու իրաւունքէն. իր անկարգապահութեան մէջ յամառելու պարագային ենթական հեռացնել ժողովէն, քուէարկելու իրաւասութիւն ունեցողներուն համաձայնութեամբ:

Դ. Նիստը ժամանակաւորապէս ընդհատել կամ դադար յայտարարել:

Ե. Ծայրայեղ պարագաներուն, երբ երեք անգամ ի կարգ հրաւիրելէ յետոյ, անհնարին կը դառնայ նիստը շարունակել, Հոգեւոր Հովիւի հաւանութեամբ Ատենապետը կրնայ փակուած յայտարարել ժողովը:

Յօդուած 49

Անդամական ժողովի որոշումները կ'առնուին ներկայ իրաւասու անդամներու քուէի պարզ մեծամասնութեամբ, բացի մասնաւոր պարագաներէ, որոնք մատնանշուած են այս Կանոնագրութեան մէջ: Պարզ մեծամասնութիւն կը նկատուի քուէներուն կէսէն մէկ աւելին:

Յօդուած 50

Անոնք որ առարկութիւն ունին ժողովին մէջ եղած առաջարկի մը, քուէարկուած որոշման մը կամ կատարուած ընտրութեան մը դէմ, իրաւունք ունին երեք (3) օրերու ընթացքին արձանագրելու հետեւեալը՝ «բողոք ունիմ» կամ «բողոք ունիմք», եւ իրենց ստորագրութեամբ յանձնել բողոքը, կցուելու համար ժողովի ատենագրութեան:

Յօդուած 51

Անդամական ժողովի մը ատենագրութիւնը պէտք է Ազգային Վարչութեան ներկայացուի յիշեալ ժողովի փակման յաջորդող երկու շաբաթներու ընթացքին:

Յօդուած 52

Ազգային Վարչութիւնը, Անդամական ժողովի ատենագրութեան մէջ յիշուած որոշումներուն եւ ընտրութիւններուն հաստատումը կամ մերժումը պարտի Անդամական ժողովին հաղորդել ամենէն ուշը մէկ ամիսէն, ամիսը հաշուելով ատենագրութեան ստացման օրէն:

Յօդուած 53

Անդամական ժողովներուն, ֆուէարկութիւնը կը կատարուի ձեռամբարձ եւ սակայն՝ պաշտօնատարներու ընտրութիւնը կը կատարուի գաղտնի ֆուէարկութեամբ: Ատենապետը իրաւունք ունի ֆուէարկելու:

Յօդուած 54

Անդամական ժողովը կ'ըտնրէ Ընտրողական Ֆանձնախումբ մը, մէկ տարուան շրջանով: Ընտրողական Ֆանձնախումբը կը ստուգէ ժողովին մասնակցող ֆուէարկելու իրաւասու անդամները, եւ կը հսկէ ֆուէարկութեանց վրայ: Կը կազմէ եւ ժողովին կը ներկայացնէ ընտրելիներու երկպատիկ ցանկ մը, որուն մաս կը կազմեն վերընտրելի շրջանաւարտ անդամները: Կը հաստատէ ընտրութեան արդիւնքը եւ գայն կը հաղորդէ ժողովին:

Թեկնածուներու անունները պէտք է ներկայացուի ինչպէս յայտարարելու շարքով, նախ՝ վերընտրելի շրջանաւարտներուն, եւ ապա նոր թեկնածուներուն անուններով:

Յօդուած 55

Թեկնածուներու անուններուն յայտարարութեանէն ետք, ֆուէարկութիւնը կը կատարուի բոլոր անոնց համար, որոնք իրենց թեկնածութեանէն չեն հրաժարած: Ընտրութեան ժամանակ կարելի է առաջարկուած թեկնածուներու ցանկէն դուրս ռեւէ անձի անունը առաջարկել, որ անդամական ժողովէն նուագագոյնը վեց ամիս առաջ ծուխին անդամ է եղած, լրիւ կերպով վնարած է իր անդամատուրքը եւ նոյն ատեն նաեւ իրաւասու անդամ մըն է:

Ընտրուած կը յայտարարուին անոնք, որոնք կը ստանան ֆուէներու մեծամասնութիւնը: Այն պարագային, երբ ընտրելիներու թիւէն աւելի թեկնածուներ ֆուէներու մեծամասնութիւնը ստանան, բարձրագոյն թիւով ֆուէ ստացած անձերը կը յայտարարուին ընտրուած: Ընտրելիներու լրիւ ցանկի ընտրութեան ձախողութեան պարագային, թափուր մնացած աթոռներու թիւը հիմք կը կազմէ ընտրելիներու երկպատիկ ցանկին: Այս ցանկին մաս կը կազմեն առաջին ընտրութեան առաւելագոյն ֆուէ ստացած բայց չընտրուած թեկնածուները: Երկրորդ ֆուէարկութեան ընթացքին, անոնք որոնք կը ստանան բարձրագոյն թիւով ֆուէները կը յայտարարուին ընտրուած: Այն թեկնածուները, որոնք չեն ընտրուած, կը համարուին անձնափոխանորդ, յաջորդաբար իրենց ստացած ֆուէներու թիւին կարգով:

Յօդուած 55-ի տրամադրութեանց համաձայն կատարուած ընտրութեան ընթացքին, եթէ հարկ ըլլայ թափուր մնացած վերջին մէկ աթոռին համար դարձեալ ընտրութիւն կատարել եւ թեկնածուները ստանան հաւասար թիւով ֆուէներ, արդիւնքը կը ճշդուի:

վիճակագրութեամբ: Վիճակագրութիւնը շահող թեկնածուն կը յայտարարուի ընտրուած եւ միւս թեկնածուն կը դառնայ առաջին անձնափոխանորդ:

Յօդուած 56

Թեկնածու կրնայ ըլլալ նաեւ ժողովին ներկայ չեղող տրատու անդամ մը:

Յօդուած 57

Ամէն քուէարկող անդամ ունի մէկ քուէ, ձեռամբարձ կամ գաղտնի: Բացակայ անդամ մը չի կրնար փոխանորդ մը ունենալ կամ քուէարկելու իրաւունքը փոխանցել ուրիշ անդամի մը եւ ոչ ալ կրնայ առարկել ժողովին մէջ տրուած որոշումներուն եւ կատարուած ընտրութիւններուն դէմ:

Յօդուած 58

Ժողովի ընթացքին, կամ յաջորդ նիստին, Ատենադպիրը պարտի կարգալ արձանագրուած ատենագրութիւնը, որ ժողովին կողմէ վաւերացուելէ ետք կը ստորագրուի Հոգեւոր Հովիւին եւ ժողովի Դիւանին կողմէ:

Է.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդուած 59

Հոգաբարձութիւնը կ'ընտրուի Անդամական ժողովին կողմէ: Անոր պարտականութիւնն է հսկել Եկեղեցիին եւ անոր կապուած հաստատութեանց վրայ, ինչպէս նաեւ անոնց նիւթական ու վարչական գործունէութեանց վրայ:

Յօդուած 60

Հոգաբարձութեան անդամներու թիւը կրնայ ըլլալ 5, 7, 9 կամ 11, ըստ Անդամական ժողովի որոշման:

Հոգեւոր Հովիւը ի պաշտօնէ նախագահն է Հոգաբարձութեան, եւ կը նախագահէ անոր նիստերուն:

Յօդուած 61

Հոգաբարձութեան անդամները կ'ընտրուին երկու (2) տարուան շրջանի մը համար, եւ անոնց ընտրութիւնը պէտք է վաւերացուի Ազգային Վարչութեան կողմէ:

Այն հոգաբարձուները, որոնք իրենց շրջանը կ'աւարտեն, իրաւունք ունին վերընտրուելու յաջորդ երկու (2) շրջաններուն համար եւս: Երրորդ շրջանի աւարտին, ենթակաները իրաւասու կ'ըլլան դարձեալ ընտրուելու՝ երկու (2) տարուան դադարէ մը յետոյ:

Այն համայնքները, որոնց անդամներու թիւը յիսունը (50) չ'անցնիր, եւ դժուարութեանց կրնան բաղխիլ, կրնան իրենց հոգաբարձուները ընտրել երկու (2) յաւելեալ շրջանի համար եւս, առանց երկու (2) տարուան դադարի:

Հոգաբարձու մը կրնայ միաժամանակ երեսփոխան ընտրուիլ, մասնակցելու համար Ազգային Երեսփոխանական Ժողովին:

Յօդուած 62

Նոր Հոգաբարձութիւնը ընտրելէ առաջ, Անդամական Ժողովը պէտք է քննէ շրջանաւարտ Հոգաբարձութեան հաշիւները, լսէ եւ վաւերացնէ Հաշուեքննիչ Յանձնախումբի գեկոյցը:

Յօդուած 63

Հին Հոգաբարձութիւնը կը շարունակէ պաշտօնի վրայ մնալ, մինչեւ Ազգային Վարչութեան կողմէ նոր Հոգաբարձական Կազմին ընտրութեան վաւերացումը եւ անոր պաշտօնի ստանձնումը: Շրջանաւարտ Հոգաբարձութիւնը պարտի Հոգեւոր Հովիւին ու Հաշուեքննիչ Յանձնախումբին ներկայութեան Հոգաբարձութեան նոր կազմին փոխանցել Եկեղեցւոյ ամբողջ գոյքերը, տոմարները, արձանագրութիւնները եւ պաշտօնական վաւերագրերը:

Փոխանցումը կը հաստատուի բոլոր կողմերուն ստորագրութեամբ:

Յօդուած 64

Հոգաբարձութիւնը իր կազմին մէջէն կ'ընտրէ Ատենապետ մը, Ատենադպիր մը եւ Գանձապահ մը, եւ այլ պաշտօնատարներ՝ ըստ պահանջի:

Յօդուած 65

Եկեղեցիի Հոգեւոր Հովիւը, Ատենապետն ու Ատենադպիրը կը կազմեն Հոգաբարձութեան Ժողովներու օրակարգը, անդամները կը հրաւիրեն Ժողովի, կը ստորագրեն բոլոր պաշտօնական վաւերաթուղթերը, եւ կը հսկեն իրենց իրաւասութեան տակ գտնուող բոլոր գործունէութեանց ընթացքին վրայ:

Յօդուած 66

Հոգաբարձութիւնը պարտի գումարել իր պարբերական նիստերը, ամիսը առնուազն մէկ անգամ:

Յօդուած 67

Հոգաբարձութիւնը պարտի Եկեղեցւոյ անունով պաշտօնական կնիք ունենալ:

Յօդուած 68

Հոգաբարձութեան իրաւասութիւններն ու պարտաւորութիւններն են. --

Ա. Գործադրել Անդամական Ժողովի կողմէ առնուած բոլոր որոշումներն ու թելադրութիւնները:

- Բ. Պատրաստել տարեկան պիւտնէն եւ գայն ներկայացնել Անդամական Ժողովին առ ի վաւերացում:
1. Պիւտնէն պէտք է մանրամասնօրէն ցոյց տայ Եկեղեցւոյ, դպրոցներու եւ հոգաբարձութեան իրաւասութեան ենթակայ այլ հաստատութեանց եւ մարմիններու հասոյթներն ու ծախսերը:
 2. Հոգաբարձութիւնը պարտի անմիջապէս Ազգային Վարչութեան յղել պիւտնէի պատնէնը:
- Գ. Անհրաժեշտութեան պարագային, Հոգաբարձութիւնը իրաւասութիւնը ունի ծախսել պիւտնէին մէջ նոյն նպատակին համար քուէարկուած գումարէն տասը առ հարիւր (10%) աւելի: Հոգաբարձութիւնը պարտի նախ ստանալ Անդամական Ժողովին վաւերացումը, նախատեսուածէն աւելի քան տասը առ հարիւր (10%) ծախսերու պարագային:
- Դ. Հոգաբարձութիւնը պարտի Անդամական Ժողովին ներկայացնել Հաշուեքննիչ Յանձնախումբին կողմէ քննուած նախորդ տարուան հաշուական տեղեկագիրը: Հաշուական տեղեկագիրը եւ հաշուեկշիռը անմիջապէս պէտք է յղել Ազգային Վարչութեան:
- Ե. Հոգաբարձութիւնը պարտի ամէն տարի քննել իրեն ենթակայ բոլոր հաստատութիւններուն եւ բոլոր մարմիններուն հաշիւներն ու գործունէութիւնը եւ իր նկատողութիւնները արձանագրել իր անդամներուն ստորագրութեամբ:
- Զ. Ամէն ամսուան սկիզբը, Հոգաբարձութիւնը պարտի Առաջնորդարան ղրկել իր տարեկան տուրքին մէկ տասներկորորդը:
- Է. Հսկել եկեղեցւոյ հետեւեալ եկամուտներուն գանձումին.--
1. Տարեկան անդամատուրքեր:
 2. Պսակադրութեանց, Մկրտութեանց, Թաղումներու եւ Հոգեհանգիստներու նուէրներ:
 3. Իւղագին:
 4. Նամակի ծրարներով ստացուած նուէրներ:
 5. Եկեղեցւոյ պնակներու հասոյթ:
 6. Հանդիսութիւններէ եւ այլ ընկերային հաւաքներէ գոյացած եկամուտներ:
 7. Փոխան ծաղկեպսակի եղած նուիրատուութիւններ:
 8. Զանազան եկամուտներ:
- Ը. Տնօրինել անհրաժեշտը Եկեղեցւոյ կիրակնօրեայ եւ տօնական օրերու արարողութեանց, Մկրտութեանց, Պսակադրութիւններու, Թաղումներու եւ Հոգեհանգստեան արարողութիւններու կանոնաւոր կատարումին համար:
- Թ. Բարոյական եւ նիւթական աջակցութիւն տալ ծխական համայնքի կիրակնօրեայ եւ Հայկական վարժարաններուն, Դպրաց Դասին, Տիկնանց Միութեան եւ այլ հաստատութիւններուն:
- Ժ. Մկրտութեանց, Պսակադրութիւններու եւ Թաղումներու համար պահել պաշտօնական տոմար եւ վերոյիշեալ նպատակներուն համար յանձնել Ազգային Առաջնորդարանին կողմէ պատրաստուած համապատասխան վկայագրերը:

ԺԱ. Անյապաղ կերպով Ազգային Առաջնորդարան փոխանցել Եկեղեցւոյ ու եկեղեցապատկան շէնքերու եւ կալուածներու կալուածագրերուն, վաճառման ընկալագրերուն, վարձքի պայմանագրութիւններուն, արտօնագրերու, կտակներու, վկայագրերու ու այլ օրինական փաստաթուղթերու պատնէնները:

ԺԲ. Հոգաժու ըլլալ եկեղեցական բոլոր շարժուն եւ անշարժ ստացուածքներուն, ինչպէս նաեւ պաշտպանել Եկեղեցւոյ օրինական իրաւունքները՝ պաշտօնական ատեաններու առջեւ:

ԺԳ. Տնօրինել կառուցումը, նորոգութիւնը կամ վարձակալութիւնը Եկեղեցւոյ շէնքերու եւ հոգաբարձութեան իրաւասութեան ենթակայ այլ կալուածներու, պայմանաւ որ նախօրօք ստանայ Ազգային Վարչութեան հաւանութիւնը՝ երբ պարագան կը կարօտի աւելի քան երեսուն հազար (\$30,000) տոլար գումարի:

Յօդուած 69

Հոգաբարձութեան դէմ եղած գանգատները պէտք է գրաւոր ըլլան եւ ուղղուին Ազգային Վարչութեան:

Յօդուած 70

Հոգաբարձութեան եւ Հոգեւոր Հովիւին միջեւ ծագած վէճ մը լուծելու համար հարցը կը յղուի Առաջնորդին ու Ազգային Վարչութեան, որոնց որոշումը պարտադիր է երկու կողմերուն համար:

Յօդուած 71

Լրիւ քննութիւն մը կատարելէ ետք, Առաջնորդն ու Ազգային Վարչութիւնը կրնան լուծել Հոգաբարձութիւն մը, երբ անիկա կորսնցնէ իր կազմին մեծամասնութիւնը՝ հրաժարականի հետեւանձնով կամ այլ պատճառներով, կամ երբ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն դէմ ընթացքի մէջ գտնուի: Նման պարագայի, Առաջնորդն ու Ազգային Վարչութիւնը կը նշանակեն ժամանակաւոր Հոգաբարձութիւն մը, որ պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ որ Առաջնորդին ու Ազգային Վարչութեան հրաւերով գումարուի Անդամական Ժողով եւ ընտրուի նոր Հոգաբարձութիւն մը:

Ը.

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Յօդուած 72

Հաշուեքննիչ Յանձնախումբը կը բաղկանայ երեք անդամներէ եւ կ'ընտրուի Անդամական Ժողովին կողմէ՝ մէկ տարուան պաշտօնավարութեան համար:

Յօդուած 73

Հաշուեքննիչ Յանձնախումբին պարտականութիւնն է քննել Հոգաբարձութեան եւ անոր հաշուետու կազմակերպութիւններուն եւ յանձնախումբերուն հաշիւները եւ գրաւոր գեկոյցով իր դիտողութիւններն ու թելադրութիւնները ներկայացնել տարեկան Անդամական Ժողովին:

Յօդուած 74

Հաշուեքննիչ Յանձնախումբը իրաւասութիւնը ունի կատարելու յատուկ ստուգումներ եւ ակնբեւ գեղծումներու պարագային նախ Հոգաբարձութեան, ապա Անդամական Ժողովին կամ Ազգային Վարչութեան ներկայացնելու տեղեկագիր:

Թ.

ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Յօդուած 75

Իւրաքանչիւր ծիսական համայնք իրաւունք ունի իր Հոգեւոր Հովիւը ունենալու:

Հոգեւոր Հովիւ մը նշանակելու, տեղափոխելու, պաշտօնէ արձակելու կամ պաշտօնի վրայ պահելու իրաւասութիւնն ու պատասխանատուութիւնը կը պատկանի Ազգային Վարչութեան եւ Առաջնորդին, Հոգաբարձութեան հետ խորհրդակցելէ ետք:

Յօդուած 76

Ծիսական համայնք մը երբ յաւելեալ հոգեւորականի մը կարիքը ունենայ, Հոգաբարձութիւնը դիմում կը կատարէ Ազգային Վարչութեան: Քննելէ ետք դիմումը, Ազգային Վարչութիւնը պատշաճ ժամանակաշրջանի մը մէջ կը կայացնէ իր որոշումը՝ Հոգաբարձութեան հետ խորհրդակցելէ յետոյ:

Յօդուած 77

Հոգեւոր Հովիւի մը պաշտօնն ու պարտականութիւններն են. –

Ա. Պատասխանատու ըլլալ ծիսական համայնքի կրօնական բոլոր գործունէութեանց: Կատարել եկեղեցական արարողութիւններն ու խորհուրդները՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ օրէնքներուն, կանոններուն եւ աւանդութեանց համաձայն:

Բ. Այցելել ծուխի անդամներուն եւ հաւատացեալներուն:

Գ. Այցելել հիւանդներուն, կարօտեալներուն եւ սգաւորներուն, ու միտքարել զանոնք:

Դ. Հետամուտ ըլլալ եւ հետեւիլ, որ ներկայ Կանոնագրութիւնը ճշգրտօրէն գործադրուի:

Ե. Հետամուտ ըլլալ եւ հետեւիլ որ անդամական ժողովներուն որդեգրած բանաձեւերը, Հոգաբարձութեան կողմէ առնուած որոշումները եւ Առաջնորդին ու Ազգային Վարչութեան կողմէ կատարուած հրահանգներն ու յանձնարարութիւնները արձանագրուին ու գործադրուին:

- Ձ. Իր գործունեության մասին տարեկան տեղեկագիր ներկայացնել Անդամական ժողովին ու Ազգային Վարչության:
- Է. Նեցուկ հանդիսանալ Եկեղեցւոյ հովանաւորած Կիրակնօրեայ եւ Հայկական վարժարաններուն, Դպրաց Դասին, Տիկնանց Միութեան, Շինարարական Յանձնախումբին եւ այլ հաստատութեանց, կազմակերպութեանց եւ յանձնախումբերու, եւ ջանալ ապահովելու Եկեղեցւոյ գործունեության բարւոճ ընթացքը:
- Ը. Հնարաւոր ամէն նիգ թափել՝ Եկեղեցւոյ անդամներուն թիւը բազմացնելու եւ գորացնելու ծխական յանձնախումբերն ու կազմակերպութիւնները:

Յօդուած 78

Հոգեւոր Հովիւը ի պաշտօնէ Նախագահն է Անդամական ժողովին ու Հոգաբարձութեան, եւ բոլոր ծխական կազմակերպութեանց ու յանձնախումբերուն, եւ կը նախագահէ անոնց նիստերուն:

Յօդուած 79

Հոգեւոր Հովիւը պատասխանատու է Առաջնորդին՝ իր հոգեւոր պարտականութեանց եւ անհատական վերաբերմունքին մէջ: Առաջնորդը իրաւասութիւն ունի դադրեցնելու Հովիւին հոգեւոր ոեւէ անյարմար գործունեութիւնը, կախակայելու Հոգեւոր Հովիւը, եւ հարցը ներկայացնել Ազգային Վարչության:

Յօդուած 80

Հոգեւոր Հովիւ մը կրնայ ուրիշ համայնքի մը մէջ եկեղեցական խորհուրդներ կատարել՝ թեմակալ Առաջնորդին արտօնութեամբ եւ պատկան Հոգաբարձութեանց հաւանութեամբ: Այն համայնքներուն մէջ, ուր գոյութիւն չունին ո՛չ եկեղեցի եւ ո՛չ ալ Հոգաբարձութիւն, եւ որոնք կը գտնուին Առաջնորդարանի իշխանութեան ներքեւ, հոգեւորականը՝ ծխատէր կամ ոչ-ծխատէր, կրնայ պատարագել եւ եկեղեցական այլ արարողութիւններ կատարել թեմակալ Առաջնորդի հաւանութեամբ միայն:

Ժ.

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Յօդուած 81

Երբ ծխական մը, հոգեւորական մը, ընտրեալ կամ նշանակեալ պաշտօնեայ մը կամ մարմին մը օրինագանցութիւն մը գործէ, Հոգաբարձութիւնը, Անդամական ժողովը, Ազգային Վարչութիւնը կամ Ազգային Երեսփոխանական ժողովը պարտին ուղղակի եւ կամ

յանձնախումբի մը միջոցաւ քննել պարագան եւ տեղեկագրել յաջորդ գերադաս մարմնին, որուն կողմէ տեղեկագրին ընդունումը կամ մերժումը կը ստանայ պարտաւորիչ հանգամանք. այսուհանդերձ ենթակաները կը վայելեն իրաւունք՝ պարագան յանձնելու յաջորդ գերադաս մարմնին վերաբնութեան:

Կարգապահական տնօրինութիւններն են. –

Ա. Ազգաբարձութիւն:

Բ. Յանդիմանութիւն՝ գրաւոր կամ բերանացի:

Գ. Հրաժարականի պահանջք:

Դ. Պաշտօնէ արձակում:

Ե. Զրկում քուէարկելու՝ ընտրելու կամ ընտրուելու իրաւունքներէ:

Զ. Արտաքսում Եկեղեցիի անդամակցութենէն:

Յօդուած 82

Հոգեւորական մը, Յօդուած 81-ով սահմանուած կարգապահական տնօրէնութեանց կողմէն, նաեւ ենթակայ է հետեւեալ տնօրինութեանց. –

Ա. Ապաշխարութիւն:

Բ. Փիլոնագրկում:

Գ. Կարգալուծութիւն:

Ծանօթութիւն

1. Կարելի չէ, ոեւէ մէկը, իբրեւ կարգապահական տնօրինութիւն, գրկել Հայ Եկեղեցւոյ խորհուրդներէն եւ պաշտամունքի մասնակցութենէն:

2. Հոգեւորականներու յատուկ կարգապահական տնօրինութիւնները կը ներկայացուին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին, Ազգային Առաջնորդարանի միջոցաւ:

3. Վէճի կարգաւորման դիմումներու, կամ առաջարկներու վերաբնութեան կարգը հետեւեալն է. –

ա. Տեղական Հոգաբարձութիւն:

բ. Ազգային Վարչութիւն:

գ. Ազգային Երեսփոխանական Ժողով:

ԺԱ.

ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՊԱՀԱՆՁՔՆԵՐ

Յօդուած 83

Երբ ծխական համայնքի մը անդամներուն թիւը նուազի այն աստիճան որ այլեւս հնարաւոր չ'ըլլար պահել Եկեղեցին, անոր շէնքերն ու ստացուածքները, սեփականութեան

կալուածագրերը Հոգաբարձութեան կողմէ պետք է անմիջապէս փոխանցուին Առաջնորդարան, գրաւոր կերպով եւ առանց պայմանի: Այն պարագային, երբ օրինական նման գործողութեանց արգելք կը հանդիսանան պատկան ծուխի նահանգային կամ տեղական օրէնքները, կանոններն ու պայմանները, պատկան Հոգաբարձութիւնը, յարգելով հանդերձ նահանգային կամ տեղական օրէնքները, կանոնները եւ պայմանները, ամէն ճիշդ պէտք է թափէ նոյն կամ նման արդիւնքի մը հասնելու համար:

Յօդուած 84

Ներկայ Կանոնագրութեան հաստատումէն եւ պաշտօնապէս վաւերացուելէն ետք, անգոր եւ չեղեալ կը հռչակուին Հոգեւոր Իշխանութեան, Առաջնորդարանին ու տեղական Հոգաբարձութեան կողմէ նախապէս հրապարակուած բոլոր մասնաւոր կամ ընդհանուր տնօրինումները, օրէնքները, կանոններն ու հրահանգները, որոնք կը հակասեն այս Կանոնագրութեան:

Յօդուած 85

Համաձայն Յօդուած 3-ի, միայն Ազգային Երեսփոխանական Ժողովը իրաւասու է փոփոխութեան ենթարկելու ներկայ Կանոնագրութեան պայմաններն ու տրամադրութիւնները, եւ միայն այդ մարմինը կրնայ մեկնաբանել այս Կանոնագրութիւնը՝ հիմք ունենալով անոր Հայերէն բնագիրը:

Յօդուած 86

Իւրաքանչիւր ծխական համայնք կրնայ հաստատուիլ (Incorporated) «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի» (Armenian Apostolic Church) բառերը պարունակող անունի մը ներքեւ, համաձայն իր գտնուած նահանգի օրէնքներուն, ստանալէ ետք Ազգային Վարչութեան վաւերացումը:

Յօդուած 87

Ազգային Երեսփոխանական Ժողովներու միջեւ երկարող ժամանակամիջոցին, Ազգային Վարչութիւնը կը մեկնաբանէ ներկայ Կանոնագրութեան պայմաններն ու տրամադրութիւնները: